ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/49

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Զանգված» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ն. Կիրակոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով բաց մրցույթ, ֆոտովոլտային համակարգերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1970-2020 գրությամբ «Զանգված» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 11.02.2020թ. թիվ 01/61-2375 գրության հիման վրա, 13.02.2020թ.-ին «Զանգված» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 13.02.2020թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 21.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 21.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.03.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 11.02.2020թ.-ի թիվ 01/61-2375 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 18.09.2019 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ֆոտովոլտային համակարգերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության ստացման աշխատանքների կատարման պարտավորությունը (ուսյսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:»

Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 46-րդ օրացուցային օրը ներառյալ:

Աշխատանքների սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառով ընկերության հետ կնքվել է համաձայնագիր և աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է ևս 30 օրացուցային օրով, որի գործողության ժամկետն ավարտվել է 2019 թվականի դեկտեմբերի 3-ին:

Ընկերության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 30-ին ներկայացվել է պայմանագրով նախատեսված թվով 18 շենքերի ֆոտովոլտային համակարգերի նախագծային փաստաթղթերի մեկ օրինակ /պայմանագրով նախատեսվել է 5 օրինակ/, որոնք չեն համապատասխանել տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին:

Նախագծային փաստաթղթերի տեխնիկական բնութագրով սահմանված չափորոշիչներին չհամապատասխանելու վերաբերյալ ընկերությանը տրվել է բանավոր պարզաբանում, ինչպես նաև 2020 թվականի հունվարի 14-ին այդ մասին տեղեկացվել է թիվ 45/129935h գրությամբ:

Միաժամանակ՝ ընկերությանն աշխատանքային կարգով, էլեկտրոնային փոստով տրամադրվել է տեղեկատվություն նախագծերում տեղ գտած անհամապատասխանությունների վերաբերյալ, որոնք ընկերությունը հավաստիացրել է շտկել մինչև 30.01.2020 թվականը:

Սակայն 2020 թվականի փետրվարի 5-ի դրությամբ ընկերությունը որևէ նախագծային շտկումներ չի իրականացրել և պայմանագրի արդյունքը չի ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Զանգված» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Զանգված» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.02.2020թ.-ի գրությամբ դիմել է «Զանգված» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ.-ի թիվ 26/26-1/1970-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին:

Մասնակիցը ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

«Սույն գործով էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

• Երևանի քաղաքապետարանի ն «Զանգված» ՍՊԸ ի միջև 18.09.2019 թվականին կնքվել է թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64 ծածկագրով գնման պայմանագիրը ֆոտովո] ֆոտովոլտային համակարգերի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման ն փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման վերաբերյալ, արժեքը 1.500.000 ՀՀ դրամ.

• Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կատարման ժամկետը երկարաձվել է, որից հետո կողմերը փոխադարձ համագործակցությամբ շարունակել են կատարել պայմանագրային պարտավորությունները:

• 30.12.2019 թվականին Ընկերության կողմից ներկայացվել է աշխատանքը պատշաճ վիճակում:

• Պատվիրատուն 18.09.2019 թվականին կնքված պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում չի տրամադրել բացասական եզրակացության օրենքով սահմանված կարգով տրված համապատասխան մասնագետի կողմից :

• Պատվիրատուն շտկման ժամկետ չի տրամադրել և լուծել պայմանագիրը 11.02.2020 թվականին:

Գտնում եմ, որ պետք է մերժել նախաձեռնված ընթացակարգը հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի համաձայն. «1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1 ին մասի 1 ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ 6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը …»:

Տվյալ դեպքում անհիմն է Պատվիրատուի նշվածը. Վերջինս դրսևորել է ոչ իրավաչափ, խտրական և ոչ մրցակցային գործողություն, քանի որ ներկայացվել է պետական պայմանագրեր, որոնք պատշաճ կատարվել են և որոնց պատշաճ կատարված լինելը հավաստվել է կատարված աշխատանքների ընդունմամբ, իսկ թերությունների առկայության վերաբերյալ առկա չէ որևէ փաստ: Նշվածի հիման վրա պատշաճ կատարմամբ հիշյալ պայմանագրերով պարտավորությունը դադարել է: Այլ կերպ ներկայացվել է պայմանագրեր, որոնք պատշաճ կատարվել են և հանձնվել են: Հետևաբար սույն պարագայում Պատվիրատուն իրավունք չունի ենթադրություններ անել կատարված աշխատանքի պատշաճ չլինելու վերաբերյալ քանի որ առկա չէ համապատասխան մասնագետի կողմից տրված բացասական եզրակացություն տրված պայմանագրով

սահմանված ժամկետում: Տվյալ դեպքում թեև կարող են դիտարկել և արձանագրել ժամկետի խախտում, սակայն այդ հանգամանքը, սույն գործով էական խախտում չի կարող համարվել, քանի որ կողմերն իրացնելով իրենց իրավունքները շարունակել են կատարել փոխադարձ պարտավորությունները:

Տվյալ դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար գնահատման ենթակա է մասնակիցների «վարքագիծը»:

Սույն գործով ընկերությունը դրսևորել է պատշաճ վարքագիծ, հետևաբար բողոքն անհիմն է և ենթակա մերժման, ուստի խնդրում եմ մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/49 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Զանգված» ՍՊԸ-ի միջև 18.09.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 46-րդ (քառասունվեց) օրացուցային օրը:

www.gnumner.am համացանցային կայքում 11.02.2020թ.-ին հրապարակված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Զանգված» ՍՊԸ-ի միջև 18.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 11.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Ընկերության կողմից 30.12.2019թ.-ին թիվ 33/19 գրությամբ Պատվիրատուին է ներկայացվել է պայմանագրով նախատեսված թվով 18 շենքերի ֆոտովոլտային համակարգերի նախագծային փաստաթղթերը:

Պատվիրատուն 14.01.2020թ.-ի թիվ 45/129935h գրությամբ Մասնակցին տեղեկացրել է վերջինիս կողմից 30.12.2019թ.-ին թիվ 33/19 գրությամբ ներկայացրած

փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ. թիվ 26/26-1/1970-2020 գրությամբ «Զանգված» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում Ֆոտովոլտային համակարգերի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կլստարման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի և «Զանգված» ՍՊԸ-ի միջև 18.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 46-րդ (քառասունվեց) օրացուցային օրը:

Ընկերության կողմից 30.12.2019թ.-ին թիվ 33/19 գրությամբ Պատվիրատուին է ներկայացվել է պայմանագրով նախատեսված թվով 18 շենքերի ֆոտովոլտային համակարգերի նախագծային փաստաթղթերը:

Պատվիրատուն 14.01.2020թ.-ի թիվ 45/129935h գրությամբ Մասնակցին տեղեկացրել է վերջինիս կողմից 30.12.2019թ.-ին թիվ 33/19 գրությամբ ներկայացրած փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

www.gnumner.am համացանցային կայքում 11.02.2020թ. հրապարակված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Զանգված» ՍՊԸ-ի միջև 18.09.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/64» ծածկագրով պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 11.02.2020թ. միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով (խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար: Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուն 14.01.2020թ.-ի թիվ 45/129935h գրությամբ Մասնակցին տեղեկացնելով վերջինիս կողմից 30.12.2019թ.-ին թիվ 33/19 գրությամբ ներկայացրած փաստաթղթերի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, ապա Պատվիրատուն իրավունք ունի չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը, հարկ է համարում հավելել, որ սույն գործում առկա՝ Պատվիրատուի կողմից տրամադրված «18 շենքերի համար ՖՎ կայանների նախագծերի մասով կատարված դիտարկումներ»-ը չեն կարող հանդիսանալ Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու հանգամանքի մասին թույլատրելի ապացույց, քանի որ այդ փաստաթուղթը անստորագիր է և նշված չէ այն կազմած անձի տվյալները: Ընդ որում՝ պետական գնման պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ պետք է կազմվի եզրակացություն, որն էլ պետք է լինի ՀՀ ֆինանսների նախարարի 20.05.2017թ.-ի թիվ 228-Ն «պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացության ձևը հաստատելու և ՀՀ ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 180-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հրամանով սահմանված պահանջների պահպանմամբ՝ ստորագրված գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից:

Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Սույն դեպքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Եզրակացություն չի տրամադրվել, իսկ սույն գործում առկա՝ Պատվիրատուի կողմից տրամադրված «18 շենքերի համար ՖՎ կայանների նախագծերի մասով կատարված դիտարկումներ»-ը անստորագիր է և նշված չէ այն կազմած անձի տվյալները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև նշել, որ պայմանագիրը լուծված համարելու փաստն արձանագրելու համար, որպես կարևոր և էական նշանակություն ունեցող փաստ, պետք է Պատվիրատուի կողմից դրսևորվի այնպիսի գործողություններ,

որոնք ուղղված են կատարողի կողմից պայմանագիրը կատարելուց միակողմանիորեն հրաժարվելուն՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.02.2020թ. թիվ 26/26-1/1970-2020 գրությամբ «Զանգված» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/49 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ